

820

II. 5

1904

Կանոնագրության

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ



ԳՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Պր 1



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY OF THE UNIVERSITY OF CHICAGO
DIVISION OF THE PHYSICAL SCIENCES



1900

JOHN F. WELLS



Vol. 1



1900


JOHN F. WELLS



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆՐԻՍ ՀԱՆՐԱԿԻԴԱԳ HANRAKIDAG
ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Է. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ I || 3 ՅՈՒՆԻՈՒԱՐ 1904



ՊԶՏԻԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Հանրագիտակը

Կը սիրեմ՝ շատ ունե՛ք երբ միսքս է պայծառ ,
Պրալքսել եղերն «Հանրագիտակ»ին .
Բուրասան մ'ե՛ան՝ ուր երգե՛ր , անհառ ,
Դեղձանիկ , սոխակ կ'երգեն՝ խայտաղիկ :

Հոն ոչ մեկ սեւ բիծ , ոչ մի նրսեմ եջ ,
Շողեր կան միայն փքրուն հովե՛ հով .
Ուր զըւարք հոգիս՝ քաւուսներու մեջ ,
Ծիւ ծիւ կ'ունենանայ՝ առողջ՝ մարգանով :

Կը գտնեմ խնկոս հովերն հոն զարնան ,
Ծաղկոս մարմանդներ , հովիտներ դալար .
Ուր քիթեռնիկներ խել խօլ կը դառնան ,
Հիւսելով կեանքոս պարեր անմուլար :

Անհուն հեռանով , բերկրանքով՝ զեղուն ,
Կը դիտեմ այնտեղ լեռներ՝ վիթխարի ,
Ուր քաղցր իր նիւթեր կը հաւքե՛ մեղուն ,
Ուր ջահն անհունին անմեղ կը վառի :

Հովիսներ, ձորեր, անհոգ կը նընջեն,
Բիւր երանգներով ծոցն այդ լեռներուն,
Ու կ'անցնին, կ'երթան անոնց ալ մեջէն,
Գետեր, վրտակներ՝ փառնով զարդարուն:

Ծաղիկներ կան հոն՝ նարգիս ու շուշան,
Հոյլ հոյլ յամիկներ, վարդեր լուսաթոյր.
Ձիւրերու մէյմէկ խորհրդանշան,
Ուր կ'երգէ յաւե՛ս վրսեմին անդոյր:

Հո՛ն ահանակիս աղբիւրներ ալ կան,
Լոյսեփմասներու ակեր յորդառաս.
Որոնց փուլերուն հիւսքն երանական,
Կը դիւթէ յետին մանուկն անխրատ:

Հոն՝ լեռ, ձոր, հովիս, զարունն ու աշուն,
Իրենց իսկա՛սիպ պատկերներն ունին.
Աղւոր պատկերներ, կենդանի, խօսուն,
Օգտակա՛ր նոյն իսկ խրո՛ղիս գիտունին:

Առաքի՛նուքիւնն—հոլաթե՛ւ պարիկ—
Հոն կը թելածէ ամառ ու ձմեռ.
Վե՛ս վե՛ս կը արսիկ պատկառո՛ս, լռիկ,
Սուրբ իմաստութեան բազմազան սերմեր:



Ու ի՛մին բոլոր, ո՛հ, իմ առ դասեր,
Այդ հանդէսին մեջ խտացած կուռ կուռ.
Պիտի անոնցմով՝ լուրջ, իմաստասեր,
Ըլլամ գիտուն մը կամ գրո՛ղ ներկուռ:

Տարէնտէ

ա. Բ. Մ. Խ. Կ. Կ.



ԾՆՈՒՆԴԻ ԸՆԾԱՅԱԲԵՐԸ



յն իրիկունը, — որ Ծնունդի նախընթաց օրն է, տղոց տօնախմբութեան օրը, — ժաննի սիրտը լեցուած էր:

Պատճառը այն է որ, կեանքին մէջ առաջին անգամը ըլլալով, պէտք եղաւ քնանալ առանց մայրական համբոյրին որ երազներու դուռը կը բանայ՝ անկողնի մը մէջ որ իրը չէ, սենեակի մը մէջ որ դարձեալ իրը չէ, գուրկ իրենց եղական սենեակէն, այն աղուոր տաքուկ սենեակէն՝ որ կահաւորուած է սիրելի և ընտանի կարասիներով, ուր, իր ծնողքը երբ ամէնօրուան աշխատանքը լմնացած կ'ըլլայ, երեքնին ալ, փոքրիկ աղջիկնին՝ ժանն անոնցմէ մէկուն ծոցին մէջ կծկտած, քով քովի կը նստին վառարանին շուրջը խորդալով, քունի ժամուն սպասելով:

Յետոյ, դեռ ուրիշ ինչ մտազբաղումներ այս փոքրիկ ութը տարուի գլխուն մէջ:

Իր մայրը՝ հիւանդ... Ծանրապէս հիւանդ, ապահովաբար... Այս առտու, մէկ քանի օրերէ ի վեր այցելող կինը չէ՞ր յայտարարած որ ժաննը ուրիշ տեղ պէտք է ղրկել՝ գիշերը պառկելու համար:

Հայրը՝ բազմահոգ, տխուր... իր կերպարանքէն, գիրքէն կարելի է կռահել... Մօրը ներշնչած վախու բաներուն վրայ չի խօսիր. այնքան աղքատացած է ան, այնքան աղքատացած, իր հայրիկը, երկու ամիսէ աւելի ատենէ ի վեր, որովհետեւ ձիւնը և նրբասառը գինքը կ'ստիպեն չբանիլ իր յարկիչի արհեստը...:

Վերջապէս, այս անծանօթ տեղը, ուր զայն պիտի թողու ընդգրկումէ մը վերջը միայն, տնապանէն վարձուած այս մանսարտը, որ տանիքին մէկ անկիւնը շինուած ձեղնայարկ մըն է աւելի ճիշդը, զարհուրելի՝ իր ատաղձներուն խառնափնթորութիւններովն ու խաւարտչին գաղտնախորշերովը, ուր, ապահովա-

պէս, անասուններ կան, — եւ ո՞վ գիտէ, գողե՞ր ալ թե-
րեւս...

Աստուած իմ, ի՞նչ ցրտին է այս միջոցին:

Հովը հերձաքարերը վեր վերցնելով ներս կը մտնէ, իբր թէ իր տունը ըլլար, փայտէ բամբուռի ձողփիւններով, չարաշուք հու-հուններով, կատաղի մլաւիներով, որոնք ամէնքն ալ անաս-
նարանի դիւային երգակցութիւն մը կը կազմեն:

Ժանն իր չորս դին խելակորոյս նայուածք մը կը պտտցնէ: Ձինքը ապահովելու համար՝ քիչ մը, կը բաւէ պաշտպանի ներ-
կայութիւնը լօթին, իր պուպրիկին, իր «աղջիկ»ին, զոր իր հետ
բերած է: Քուրջերու տձեւ պատատ մըն է ան, ինչպէս կը շի-
նեն աղքատներու տղաքը ու զայն կը մկրտեն սիրուած անունով
մը և որոնք այնքան տարօրինակօրէն խորունկ ու մենաշնորհուած
գուրգուրանքով մը կը կապուին, որքան հարուստներուն տղաքը
իրենց նուրբ ու խնամքով հագուած պուպրիկներուն:

Այս հաւատարիմ ընկերը իրեն պիտի օգնէ ինքզինքը
պաշտպանելու համար հովին բռնութեան դէմ, ինչպէս նաեւ ան-
ասուններուն և գողերուն յարձակումներուն ալ:

Ժանն հանուեցաւ գողդղալով... Հիմակուընէ իսկ կը պատ-
րաստուի բարձին վրայ երթալ միանալու իր «աղջիկ»ին... իսկոյն
կը յիշէ թէ այս իրիկունն է որ Մնունդի Ընծայաբերը կ'իջնէ չը-
մինէներուն մէջ՝ իր պարգեւները դնելու համար:

Աւա՛ղ, մանսարտին մէջ չըմինէ չկայ բնաւ:

Պէտք պիտի ըլլա՞ր արդեօք իր սովորական նուէր բաշխու-
մին մէջ զինքը մոռցած ըլլալու պարագային համակերպիլ...

Բայց Ժանն երդիքը նշմարեց... Որպէսզի Մնունդի Ընծա-
յաբերը իր ծխան մաքրողի չըջանի միջոցին չմտածէ իր հետա-
քրքիր աչքը յառել հոն, պէտք է արդարեւ անփութեան եղական
չափ մը ընծայել: Այո՛, այս այսպէս է, երդիքը չըմինէին տեղը
պիտի բռնէ:...

Պառկելէ առաջ, Ժանն իր կօշիկները տեղ մը դրաւ, յետոյ,
վստահ բախտին ելքին, սիրական լօթը սրտին վրայ սեղմելով
կը քնանայ, մրմնջելէն ետքը ջերմեռանդ աղօթք մը ուր Մը-
նունդի Ընծայաբերը թախանձանքով հրաւիրուած է աղէկցնել իր
մայրիկը, իր հայրիկին գործ հայթայթել, ու զինքն ալ չմոռնալ
իր նուէր բաշխելուն մէջ:

* * *

Մնունդի Ընծայաբերը լսած պիտի ըլլա՞ր իր աղօթքը:

Հաւատալու հակամէտ պիտի ըլլայի ատոր:

Ահաւասիկ, արդարեւ, մարդ մը հոն կուգայ գաղտնի գնաց-

քով մը, շուտով մը տխուր ձեղնայարկին մէջ կը սողոսկի, պէտք է խոստովանիլ որ ո՛չ թէ ցցուած հրդիքէն, վասն՝ զի տանիքը ա՛յնքան լարծոռն է եղբր նրբասառէն, այլ պարզապէս՝ դրան կիսաբացուածքէն, որ անոր ճամբայ տալու համար բաց ձգուած էր։ Միմիայն, անոր դիմանիչը չի համապատասխաներ աւանդա-վէպին ըսածին։

Նախ ածիլած է իր սպիտակ երկայն մօրուքը, և իր լայնա-ծալ զգեստը հանած է։ Մինակ կատուի ստեւի պէս ցցուն փոք-րիկ պեխ մը պահած է, ու նորաձեւութեան համեմատ հագուած է։ Ատկէ զատ, անակնկալներով ակաղձուն իր կողովը տեղ մը մոռցած ըլլալու է, ինչու որ իր կարկամած ձեռքերուն մէջ այ-լանդակ բան մը սեղմած է որ քիչ մը խաղալիքի կը նմանի։

Մնաց որ չալիկ դէմք մըն ալ ունի Ծնունդի այս ընծայա-բերը. դէմք մը որ միեւնոյն ատեն սպառնացող ու շմորած է, և ստուգիւ, ժանն կ'աճապարէր երեսը ծածկել սաւաններուն մէջ՝ զանիկա չտեսնելու համար, այնքան ատենէ ի վեր քունը չէր տարած։

Տունին խորունկէն կանչուըռտութներ, պոռչտութներ կը բարձրանան, որոնց կը խառնուի՝ սանդուղներուն վրայ արագ արագ քայլերու խառնակ տակնուվրայութիւն մը։

— Վե՛րը, վե՛րը . . . չո՛ւտ, չո՛ւտ. աճապարեցէք . . . բռնեցէ՛ք աւազակը . . . :

Օ՛հ, օ՛հ, Ծնունդի այս ընծայաբե՛րը . . . :

Ափսո՛ս, այո, գուշակուեցաւ արդէն։

Շփոթած, դաժան դէմքով, աւազակը, նեղը խոթուած աղուէսի մը պէս, պարապ տեղը ամէն կողմերէ ելք մը կը փն-տռէ . . . երդի՞ք . . . այս վտանգաւոր տեղէն ինքզինքը դուրս նետել յաջողելէ առաջ, քսան բազուկներ զինքը բռնած պիտի ըլլան փախած միջոցին . . . Արդէն զինքը հետապնդողները սան-դուղին գլխուն վրայ են։

Վերջապէս անկողինը կը նշմարէ։ Ուրիշ բան մը չընտրեր։ Մէկ ոստովով կը նետուի անկողին տակ, հոն կը կծկուի գա-հավիժաբար, ու տափակ մը մնացած այս թաքստոցին մէջ, դող-դողազին, շունչը բռնելով կ'սպասէ . . .

Ուժգնօրէն մղուած դուռնէն, աւելներով եւ ունելիներով զինուած մարդիկ ու կիներ ներս կը խուժեն խառնիճաղանձ, . . . բայց իսկոյն կը կենան սեմին վրայ, լռիկ մնջիկ, լիտանդաղա-տանքոտ յարգանքով մը անշարժացած ժաննի առջեւ, որ խո-րունկ քնացած է, իր «թղթիկ»ը բազուկներուն մէջ սեղմած ուժ-գնակի . . . :

— Լո՛ււ, լո՛ւ... :

— Խեղճ հրեշտակ, քուրջէ պէպէքին հետ՝ շատ պիտիտիկ թոնթոշ աղջիկ մըն է :

— Շունշանորդի մարդը հոս չէ ապահովաբար, ուրիշ տեղ պէտք է փնտռել :

— Ակներես, է, բայց չըլլայ որ ծակ մը պահուըտած ըլլայ : Սա՛ անկողինին տակը չըլլա՞յ :

— Կատակի՞ կ'ելլաք կոր, պզտիկը արթնցած կ'ըլլար մինչեւ հիմա :

— Թերեւս երդիքէն ազատած ըլլայ ինքզինքը :

— Ձէ՛, տեսէ՛ք, տղին կօշիկները կանոնաւոր մնացած են :

— Սխալ ճամբայ բռներ ենք :

— Շարունակենք հալածումը :

Այս հակիրճ, կիսաճայն ու միահաւան խօսակցութենէն ետքը խումբը ոտքին ծայրին վրայ կոխած, անշշուկ, քաշուած է՝ կրկին անգամ զգուշութեամբ գոցելով դուռը :

Քանի մը վայրկեան կ'անցնի. սանդուխը իր լուսթիւնը վերստացած է :

Այն ատեն, դանդաղաբար, մարդը ապաստանէն դուս կ'ելլէ սողալով, ոտքի կը կենայ. տփգունած, մահո՛ւ չափ տփգունած, դէմքը վախու սարսափելի արտայայտութիւն մը առած, կուրծքը ներոյժ տագնապէ մը աւելի տրոփուն : Ա՛լ ազատուած է : Ու գիտէ թէ որու կը պարտի իր փրկութիւնը :

Լուսնի շող մը երդիքին ապակիներէն ներս թափանցելով, շեշտակի կը խաղայ աղջկան դէմքին վրայ, որ կարծես կը ժպտի երազուն անձի մը :

Մարդը անկողնիկին կը մօտենայ՝ իր կարգին, յարգանքով խանդաղատանքով, զղջացած թերեւս, մտապիշ կը նայի այս անմեղ քունին, խորհելով հեռաւոր բաներու վրայ, որոնց յիշատակը կը յուզէ մեղմօրէն : Իր դիմագծերը կը թուլնան յանկարծ ու արցունքներ կը գլորին աչքերն ի վար... Բայց քնացողին չթուռնքները կ'երերան, հծծիւն մը կը թռչի բերնէն, զոր իմանալու համար մարդը կը ծռի :

— Ծնունդի բարի՞ ընծայարեք... :

Ոտքի կ'ելլէ վերստին ու կը մրմնջէ արգահատանքոտ շեշտով մը :

— Խեղճ տղեկ, Ծնունդի Ընծայարեքը կ'երեւայ թէ այս գիշեր ուրիշ շատ տեղ զբաղած ըլլալու է որ քեզի այցելելու չիօրհիր : Բայց անոր դերը ե՛ս պիտի խաղամ, ու ասիկա՛ կը պարտիմ քեզի :

Եւ գրպանները նայելով, դռնակին տակը տեղաւորուած

փոքրիկ կօշիկներուն մէջ դրամի մեծ քանակութիւն մը կը դնէ ,
յետոյ մատներուն ծայրով , անմեղին համբոյր մը զրկելէ վերջ ,
պատուհանը կը բանայ անկէ բաժնուելու և վերստին վար իջնե-
լու համար , կուրծքը անդունդին , տանիքին խողովակներուն մի-
ջոցաւ կը փախչի , ուրուականի մը արագութեամբ . . .

* * *

— Ժա՛ն . . . Ժանէ՛թս . . . աղէկ քնացա՞ր :

— Ո՛հ , այո՛ , հայրի՛կ :

— Շո՛ւտ , ելի՛ր , ծո՛յլ , եթէ կ'ուզես խաղալ պզտիկ եղ-
բորդ հետ զոր այս գիշեր Մնունդի ընծայաբերը բերած է քեզի :

— Հապա մայրի՞կը :

— Մայրիկդ բժշկուած է . . . Օ՛ն , չուա ըրէ : Քեզ գրկելու
կ'ոպասէ :

Ժանն աղօթքը չըրած , անկողնէն կը ցատկէ աներկիւղ ,
վտաւակը կը հագնի ու ամբողջ այս գեղեցիկ նուէրներուն ուրա-
խութեանը մէջ , անփոյթ Մնունդի ընծայաբերին նուէրին , մէկ
ոտքով կը վազէ իր կօշիկները փնտռելու համար : Բայց հոն ի՞նչ
կան . . . Ո՛հ , ոսկիի կտորներ , և դարձեալ ոսկիի կտորներ , ու-
րոնք կը շողան պայծառ արեւի մը առաջին ճառագայթներուն
տակ :

— Հայրի՛կ , հայրիկ . . . տե՛ս կօշիկներուս մէջ ի՞նչ է դրեր
Մնունդի ընծայաբերը :

Հայրը կը մօտենայ՝ թերահաւատ , յետոյ , եղածը տեսնե-
լով յօնքերը կը պոստէ :

— Հա՛ , հա՛ , կռահեցի կարծեմ ճշմարտութիւնը . . . Երէկ ի-
րիկուն առաջին յարկի վարձակալէն գողցան , ու այսչափ ոսկին
յայտնի է որ անոր դրամարկղինն է : Ինծի տուր , պզտիկ ,
որպէսզի տանիմ վերադարձնեմ զանոնք :

Իրողութիւնը երեւան չելաւ անմիջապէս : Եւ ահա՛ ուր կը
կայանայ մեր ճշմարիտ պատմութեան բարոյականը :

Առաջին յարկին վարձակալը , որ բարի մարդ մըն էր , խո-
րապէս յուզուած այս իրողութեան հիանալի գիւտէն , յայտարարեց


— Զպիտի ուզէի ինքզինքիս սահմանել գողի մը վեհանձնու-
թիւնը , ոչ ալ ձեր աղջիկէն առնել ինչ որ տուած էր իրեն Մը-
նունդի ընծայաբերը . կաղաչեմ , պահեցէք այս ստակը իրեն
համար , ու թող գործածէ իրեն հաճելի երեւցած բանին համար :

Ասկէ զատ , դրացիները հարցաքննելով հասկցաւ ընտանիքին
նեղ կացութիւնը , ու տեղեկութիւններ առաւ պարկեշտ յարկիչին
վրայ , ինքնաբերաբար անոր բաւականաչափ գումար մը փոխ

տուաւ իր հաշուին գործ մը բռնելու համար. առաջարկ մը որ կարելի է հասկնալ՝ երախտագէտ յօժարութեամբ ընդունուեցաւ: Ու այսպէս է որ մեր հերոսուհին լիովին տեսաւ իր երրեակ բաղձանքներուն իրականանալը. գրեթէ այս յիշատակելի գիշերուան միջոցին էր որ Մնունդի Ընծայարերը աղէկցուցած էր իր մայրը, հօրը աշխատութիւն բերած, ու իր կօշիկներուն մէջ անանկ նուէր մը դրած որ՝ միայն երջանիկներու տղոց կը վիճակի այս աշխարհիս մէջ:

Աւելցնենք նաեւ, այս գործին վրայ, եղբօր մը աշխարհ գալուն հաճելի անակնկալը:

Վ. ԳԱՐԱԳԱՆԵԱՆ



Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի չաբաթական 20 էջէ բաղկացեալ:

Վեցամսեայ ու Եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ համար

30 դրուշ

Գաւառաց »

35 »


Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

Հանրագիտակի այս և յաջորդ թիւերէն իբր նմոյշ կը խրկենք մեր բոլոր ծանօթներուն, անոնք որ կը փափաքին բաժանորդագրուիլ, թող հաճին մեզ իմաց տալ, իսկ եթէ չեն ուզեր կը խնդրուի իրենցմէ՝ թերթերէ մին ետ դարձնել վրան «իստէ» բառը գրելով:



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՀԱՄԱՅՆԱԳԻՏԱՐԱՆ



Aaron, Ահարոն. — (Լեոնարնակ) Ղեւտայ ցեղէն Ամրամայ և Յոքարէղի որդին: Ծնաւ 1574ին (Ն. Ք.). Երբ Մովսէս Իսրայելացիները Եգիպտոսէ հանելու կը ջանար, Աստուծոյ հրամանով անոր աջակից եղաւ, ինչպէս նաեւ Եգիպտոսէ ելլելու ժամանակ ալ գործակից եղաւ Մովսէսի: Ամաղեկացիներու դէմ պատերազմին ժամանակ՝ վեր բռնեց Մովսէսի ձեռքը, անոր հետ ելաւ նաև Սինա լեռը տեսնելու Աստուծոյ փառքը: Իր հնազանդ ու քաղցրաբարոյ բնավորութեամբ ընտրուեցաւ Քահանայապետ: Աստուծոյ հրամանաւ Ահարոնի գաւազանը ծաղկեցաւ: Երբ Մովսէս Սինա լեռան վրայ կ'սպասէր Տաանաբանեայ Պատուիրանները առնելու համար, Ահարոն չգիմանալով ժողովրդեան թախանձանքին, որ կուռք մը կը խնդրէր իրմէ, Ոսկիէ Հորթը շինեց, ուստի Աստուած չթողուց անոր մտնել Աւետեաց Երկիրը, եւ Ահարոն մեռաւ Հովր լեռը. Եգիպտոսէ ելլելէն 40 տարի ետքը, գրեթէ 123 տարեկան:

Abaca, Աբակ. — Տեսակ մը աղամաթղենի է որ Փիլիպեան կղզիներու մէջ շատ կ'աճի: Տերեւները նեարդային թելեր ունին զոր կարելի է հիւսել. առեւտուրի մէջ Մանիլի Կանեփ անունը կուտան: Այս թելերով կը շինուին չուաններ, փսիաթներ, ջուլեր, առագաստի լաթեր, թուղթ, եւայլն: Իսկ ներքին պատեաններէ յառաջ եկած թելերով, որոնք համեմատաբար աւելի բարակ կ'ըլլան, կը պատրաստեն աժան ծախուած հագուստներ:



Abaissement, Վերածում, Խոնարհում. — Գրահաշ. «Հաւասարութեան մը կարողութիւնը խոնարհեցնել» կը նշանակէ գտնել անասկ հաւասարութիւն, մը որու անձանթիւն աստիճանը նախորդինէն աւելի պզտիկ ըլլայ և սակայն անձանթիւնները համարժէք ըլլան երկու հաւասարութիւններուն մէջ ալ: Օրինակի համար, երբ յետադայ (1)

$f^1 + pf^2 + q = 0$ հաւասարութեան մէջ $f^2 = \varphi$ նկատեմ, կ'ունենամ երկրորդ հաւասարութիւն մը (2), $\varphi^2 + p\varphi + q = 0$: Հոս (1) հաւասարութիւնը վերածուած է իրմէ աւելի պզտիկ աստիճանի մը (2) հաւասարութեան: Այս վերջինին մէջ φ ի արժէքը գտնելով կըրնամ փոխադրել (1)ի մէջ՝ f ի տեղ, սա հաւասարութեամբ՝ $\varphi^2 = f^2$, $\varphi = f$: Երբ հաւասարութեան մը անձանօթին արժէքը գտնելու գործողութիւնը կը դժուարանայ անոր աստիճանին բարձր ըլլալուն համար, հաւասարութիւնը կը վերածեն, եթէ կարելի է, աւելի պզտիկ աստիճանի մը ուրկէ դիւրաւ կը քաղուի անձանօթին արժէքը:

(Տիեզերագ.) «Հորիզոնի մը խոնարհումը» կը կոչուի այն անկիւնը որ կը կազմուի դիտողին աչքէն դէպի այդ հորիզոնը ուղղուող գծին և տեղւոյն իմանալի հորիզոնին միջև: Նոյնպէս «Լուսաւոր կէտի մը խոնարհումը» կ'ըսեն այն անկիւնին որ այդ կէտին հորիզոնէն ունեցած հեռաւորութիւնը կը չափէ: Այսպէս, դիտողը քանի մօտենայ հասարակածին՝ բեւեռն ալ նոյն համեմատութեամբ խոնարհում մը կը կրէ: Մոլորակները՝ եթէ երկրիս մակերեւոյթին վրայէն դիտուին՝ աւելի հորիզոնին վրայ խոնարհած կ'երեւին քան եթէ երկրիս կեդրոնէն դիտուին:


(Աստուածաբ.) «Բրիստոսի խոնարհութիւնը» կը ներկայացնէ Մարմնացեալ Որդւոյն Աստուծոյ վիճակը: Բողոքական աստուածաբաններու միջև երկարատեւ ու նորին վիճաբանութիւններու առիթ եղած է: Ծիսականները երկու տարր ի վեր կ'առնեն խոնարհութեան վիճակին մէջ, աստուածային վեհութեան պակասութիւնը և սպասաւորի ձեւին զգեցումը:

Abajoue, Ծնօսապարկ. — Կարգ մը կապիկներ, ջղջիկներ, կրծողներ այտերնուն թանձրութեան մէջ կազմուած դնդերային պարկ մը ունին: Հին Աշխարհի կապիկներուն Ծնօտապարկերուն բացուածքը բերնին մէջ է, իսկ Ամերիկայի կարգ կրծողներուն քով այդ բացուածքը դուրսէն կ'ըլլայ, և այս պատճառաւ Երկրեբան ալ կ'ըսեն այդ կենդանիներուն: Կապիկներն ու կրծողները Ծնօտապարկին մէջ կը պահեն անմիջապէս չկլլած սնունդներն, իսկ ջղջիկները օդով ուռեցնելով զայն, թռչելու մեծ դիւրութիւն կ'ունենան:

Abandon noxal. — Հոռմայեցիներու մէջ ո՛ր և է փնտռի մը պատասխանատու անձը իրաւունք ունէր փնտսը առթող կենդանին կամ անձը՝ փնտսողին թողուլ և ինք ազատիլ պատասխանատուութենէ: Հայրը կրնար իր զաւակը թողուլ, տէրը՝ իր գէրին, սեփականատէրը՝ իր անասունը: Այսպէսով, տղան ինք պատասխանատու կը նկատուէր իր գործքերուն, գերին՝ տէր կը փոխէր: Այս օրէնքը մինչեւ հիմա կը գործադրուի Պատի, Լուիզիանայի և Պափիէրայի մեծ դքսութիւններուն մէջ:

Abaque, Թակաղակ. — (Ճարտար.) Սիւնի տափարակ մաս մը որ խոյակի և քովթարի մէջտեղ կը գտնուի: Կը կարծուի թէ նամէէն առաջ Թակաղակը պարզ քարէ կամ փայտէ քառակու-


սաճեւ տախտակէ մը կը բաղկանար, Դորիական ոճի մէջ պարզ ու քառակուսի է, Իօնական ոճին մէջ թափօն զարդեր կան վըրան, իսկ Կորնթականին մէջ կը քանդակուի: Դորիական ճարտա-



ԹԱԿԱՂԱԿՆԵՐ. — 1. Բիւզանդական. — 2. Հռոմէական. — 3. Կորնթական. — 4. Գոթական. — 5. Եզիպտական. — 6. Հնդկական

բապետութեան մէջ բազմանկիւնի կամ բոլորաձեւ է: ԺՆ. դարու ճարտարապետները բնաւ չեն գործածած զայն:


(Թուար.) Թակաղակը հաշուելու մեքենայ մըն է Յունական ծագումով. Հռոմայեցիները կը գործածէին զայն: Կը բաղկանայ քառակուսի չըջանալի մը որու մէջ



կարգ կարգ զուգահեռական թելեր կան. այս թելերուն վրայ կը սահին կոճակներ: Իւրաքանչիւր կարգի վրայ առաջին կոճակը կը ցուցնէ միաւորները, երկրորդը՝ տասնւորները, երրորդը՝ հարիւրաւորները եւ այսպէս շարունակաբար: Անյիշատակ ժամանակներէ ի վեր Չինացիներն ու Թարթարները հաշուելու համար տեսակ մը մեքենայ կը գործածէին Սուվանբան անունով որ ճշդիւ այս Թակաղակն է: Միջին Դարու վերջերը Մօնկօլները զայն մտցուցին Ռուսիա: Ժամանակակից Պարսիկները կը գործածեն զայն իրենց առօրեայ գործառնութիւններուն մէջ: Նախնական վարժարաններուն մէջ ալ տղոց հաշուել սորվեցնելու համար ընդունուած է Թակաղակի կատարելագործեալ մէկ ձեւը:

Abatage, Ձեմուժ. — Միւր ուտուելու ծառայող կենդանիները մորթելու համար ամէն երկիր, իր սովորութեան համեմատ տարբեր միջոցներ ունի: Մենք կենդանին կը մորթենք վիզը դանակով կտրելով, Հրէաները՝ կենդանին սպաննելէ առաջ քրններ կուտան Բարունիին, Կենդանիին զիստին վրայ ջիղ մը կայ, համապատասխան այն ջիղին զոր Տէրոջ Հրեշտակը՝ Յակոբի հետ


կռուած ատեն բռնեց: Եթէ այդ ջիղը երեւնայ՝ կենդանիին միսը անսուրբ կը նկատուի և չեն ուտեր: Նոյնպէս զենումէն առաջ ու



ետքը Բարունին մատովը կը նայի որ դանակին բերանը չբխանայ. եթէ բխացած է՝ կենդանիին արիւնը սիրտը խռնուած կը նկատուի եւ միսը ուտելի չըլլար. Թուրքիոյ մէջ ժողովուրդը աւելի ոչխարի միսով կը սնանի քան թէ կովու: Իսկ Եւրոպական երկիրներու մէջ ուր կովուն միսը շատ աւելի ընդհանրա-

ցած է, կենդանին մորթելու համար տարբեր միջոցներու կը դիմեն: Փրանսացիները կովուն ճակտին 2—3 քիլոնոց լախտի ահագին հարուած մը տալով կ'սպաննեն: Անգլիոյ մէջ՝ ուր կովե-

րուն գանկոսկրը բաղդատաբար աւելի բարակ կ'ըլլայ, կենդանին կ'սպաննեն գանկին մէջ սրածայր մուրճ մը մխելով, որ մինչեւ ուղեղը կը թափանցէ: Միեւնոյն սկզբունքին վրայ հիմնուած է նաեւ «ճակատի դիմակը»: Կաշիէ շինուած դիմակ մըն է աս զոր կենդանիին դէմքին կ'անցընեն. ճակատին վրայ ծակ մը կայ բաց թող-



ուած, ուրկէ կ'անցնի սրածայր գամ մը: Խոշոր մուրճի հարուածով մը գանկին մէջ կը մըխեն այդ գամը որ մինչեւ ուղեղը կը թափանցէ և մահը վայրկեանական կ'ըլլայ: Հագարները սպաննելու համար դանակ չեն գործածեր. կենդանին ետեւի ոտքերէն կը կախեն եւ վիզէն առի շեղ ոյժգին հարուած մը կուտան: Մորթուած կենդանիին արիւնը վազցնելէ ետքը եղջիւրներն ու ոտքերը կը կտրեն: Մորթը վրայէն հանելու համար, վզին ու կռնակին կողմէ մէյ մէկ ծակ կը բանան, ուրկէ գնտաձեւ ծայրով փայտէ կամ երկաթէ գաւազան մը խոթելով կարելի եղածին չափ կաշին միսէն կը զատեն, յետոյ այդ բացուածքներէ փելով մորթը ամբողջովին կը հանեն: Վերջապէս կենդանիին կուրծքին վրայ երկայնքին կը ճեղքեն, դուրս կը հանեն թոքերը, աղիքները, ստամոքսը ևն. եւ միսը կտոր կտոր կը գործածեն:

ԹՆՆՊԵԱՆ

ՊԵՏԻՎ ՍԱՆՊԱԼՆԵՐԸ



ին պատմութիւն մըն է զոր պիտի պատմեմ ձեզի, ըսաւ Մարթա մօրաքոյրս, վասն զի այն ատեն տաւր տարեկան էի, եւ հիմա եօթանասուն և հինգ տարու եմ: Այսօրուան պէս Ծնունդի փոթորկալից գիշեր մըն էր, և աւելի սոսկալի: Անկէց ի վեր, անոր նման փոթորիկ չեմ տեսած:

« Երեւակայեցէք որ հովը կը պատուէր ծովը, որուն ահարկու մռնչիւնը կը լսուէր՝ առանց ծովը տեսնելու, նոյն իսկ ծովեզերքէն, այնպիսի ժխոր մը՝ որուն նմանը կարելի է դժուարին մէջ իսկ չի լսուի, եւ որուն մէջէն հազարաւոր հեծեծանքներ կը լըսուէին: Այն ժամանակի ծերունիները կ'ըսէին թէ՛ փոթորիկին և ալեկոծութեան բոլոր զոհերն էին որոնք փրփրագէզ ծովէն շարժելով եւ մոլեգին ալիքներուն կռնակին վրայ կաշկանդուած՝ տարիներէ՝ գուցէ դարերէ ի վեր իրենց սպասած օգնութիւնը կը խնդրէին:

« Բայց մտածեցէ՛ք, ո՞վ կը համարձակէր օգնութեան հասնիլ նոյն իսկ նաւակոծեալներուն ասանկ գիշերով մը, երբ ամէն բան սեւ ու խաւար է՝ գոց սենեակի մը պէս եւ երբ կոհակներուն փրփուրները կը հասնին մինչեւ իսկ փարոսներուն լապտերը՝ անոր լոյսը խափանելու համար: Ո՛չ, երկրի վրայ ասկէ ահարկու եւ սոսկալի բան մը չկայ: Ամէնէն յանդուգներն իսկ կը դողան անկից՝ ու իրենց տուններուն մէջ կ'ապաստանին: Մտածեցէք այն տարաբախտներուն վրայ, որոնք յանկարծակի փոթորկի կը բռնուին ծովուն բացերը, զորս հովը կը դղրդէ ու կը ցնցէ, ծովը լեռնանման կը գլորէ եւ, անոնք, բովանդակ այս դղրդման մէջ, կը մտածեն իրենց սպասող սիրելիներուն վրայ, զորս այլ եւս չի պիտի տեսնեն:

« Առաւօտուն, հովը կը շարունակէր փչել, բայց ո՛չ թէ զարհուրեցնելու համար սրտապինդ ձկնորսները, կ'երեւի թէ՛ այսպիսի ժամանակներ ձկնորսութիւնը շահաբեր կ'ըլլայ: Հայրս, որ ամէնէն աղէկ գիտեր ասիկա, անմիջապէս նշան ըրած էր երկու մանչերուն, որոնք իր միակ նաւաստիներն էին, եւ ահա կը մեկնին, իրիկուան ետ դառնալու խոստումով, գիշերուան հրաշալի եկեղեցական երգեցողութիւններէն եւ Ս. Պատարագէն պալասա չի մնալու համար, Թերէզ ու ես, առանձին մնալով տունին մէջ.



կուգէինք չթողուլ զանոնք որ մեկնին, վասն զի հովը հետզհետէ կը սաստկանար, եւ ծերունիները. ծովեզրին վրայ կեցած ի տես, կ'ըսէին թէ՛ երեւոյթն ապահովիչ չէր, եւ թէ, ապահովապէս, աւելի բուռն փոթորիկ մը պիտի ելլէր: Անօգնատ Չուանը թուլնալուն պէս, մակոյկը նետի պէս սրացու, եւ հայրիկը երկու ձեռքերը փողի մէջէն դնելով բոլոր ուժովը կը պռուար.

« — Հէ՛, պզտիկ, մի՛ մոռնար սանդալներդ վառարանին մէջ

դնելու, յայտնի չէ թէ՛ ի՞նչ կը պատահի, եւ կարելի է բան մը ըլլայ :

« Տեսնելով անոր մեկնումն այնչափ գոհ, այնքան հաստատակամ. մենք քիչ մը ապահովցանք. բայց երբ գիշերը վրայ հասաւ՝ մակոյկը երեւան չեւաւ. ոչինչ, բայց եթէ սոսկալի հովին ծովէն ելած փրփուրներն որ ծրարներով կ'իյնար, մինչեւ Պարֆլէօրի եկեղեցւոյն սրբարանին վրայ : Ո՛չ, ո՛չ, երբեք տեսնուած ու լսուած չէր ասանկ բան : Այսպիսի քառսի մը մէջ ի՞նչ կրնար ընել պզտիկ խեղճ մակոյկ մը՝ մէջը գտնուող երեք խեղճերուն :

« Սակայն, փոթորիկն երթալով կը սաստկանար եւ այնքան կատաղի կը դառնար որ դուրսը մնալ իսկ անխելքութիւն էր, ու ես կը յիշեմ այսօրուան պէս թէ՛ ամպի մեծ կտորներ՝ հովէն փեռեկտուած կը թաւալէին տանիքներուն վրայէն, սրարաւ ճիւղաբազուցութիւնով : Շատ անգամ ալ երկուքի կը ճեղքուէր. եւ ամբողջ լուսնկան կ'երեւէր՝ իբր անդունդի մը խորը, կայծակի արագութեամբ : Բայց սոյն վայրկեանին ժամանակ ունեցանք տեսնել սպիտակափառ ծովն՝ մինչեւ հորիզոնը, անսահման պատանքի մը պէս :

« Թերէզ կ'ուլար, ես ալ կուլայի. երեկուան պէս կը յիշեմ, ու այսպէս անցան գիշերուան առաջին երկար ժամերն. մինչեւ որ Պատարագի ժամանակը ծանոյց զանգակն, որուն զանգիւնները մահանուագի մը կը նմանէին : Առանց բառ մը լսելու թերէզ առաւ իր վերարկուն եւ ազօթագիրքն եւ նշան ըրաւ ինծի որ իրեն հետ երթամ : Ես արդէն սանդալներս դրած էի վառարանին մէջ եւ բոպիկ էի : Թերէզ չտեսաւ ու այնպէս անոր հետեւեցայ մինչեւ եկեղեցի : Ներքին ձայն մը կ'ըսէր ինծի թէ՛ ատիկա երջանկութիւն պիտի բերեր ինծի : Տարօրինակ գիշեր Ծընդեան. ի՞նչպէս ամենաբարին Աստուած ասանկ օդ մը կրնայ ընել, երբ համօրէն աշխարհք՝ իր ծննդեան տօնը կը կատարէ :

« Ի՞նչպէս հասանք եկեղեցի : Կարծեմ թէ հոն տարուեցանք :

« Վերջապէս Պատարագն աւարտեցաւ ու տուն դարձանք : Թերէզ այնքան ազօթած էր ու ես ալ, բայց փոթորիկը չէր մեղմանար, ընդհակառակն : Զայրուցք մը, ահաւոր ժխոր մ'էր, իբր թէ միլիոնաւոր շուներ միաբերան կ'ոռնային : Տունը ամայի էր, եւ առաջին խուցին մէջ մարխի յետին լոյսով տեսանք երեք անկողիններն, ուր ալ չպիտի պառկէին հայրիկն ու աղբարիկներն, որոնց առառաւելն դիակներն անշուշտ պիտի գտնուէին ծովեզերքը նետուած՝ երբ փոթորիկը հանգարտէր :

« Թերէզ, միշտ համր, խառնեց վառարանին ցանցառ հրատներն, և ծնրադրելով որպէս զի բոլոր ուժովը փչէ, գէշ աղէկ հրահրեց զանոնք եւ սկսաւ տաքցնել իր սառած ձեռքերը : Իմ ոտքերս ալ գրեթէ ցառած էին, ակռաներս կը կափկափէին, եւ կը մտածէի անոնց վրայ, որոնք աւելի ես կը մտէին ծովուն խորերը պառկած, երբ յանկարծ զարմացման ճիչ մը արձակեցի : Սանդալներէս մէկուն մէջ վրան գիրերով թղթի կտոր մը կար, որոնք ոսկիի, կամ աւելի ճիշդը լուսաւորներու պէս կը պճլտային, տեսակ մը վճիտ լոյս, որուն նման ամառուան գեղեցիկ գիշերները երկինքի երեսը միայն կը տեսնուի :

« Յանկարծ մատներս դողդղացին, եւ այնքան յուզուած, այնքան ալլալլած էի որ չէի համարձակէր ձեռքս մօտեցնել խորհրդաւոր թուղթը առնելու համար :

« — Թերէզ, գոչեցի, հո՛ն, սանդալին մէջ ի՞նչ կայ, կարդայ վրան գրուածն. բայց շուտ կարդա՛յ, Թերէզ, դուն որ գիտուն ես :

« Թերէզ թուղթն առաւ, սրբելէ յետոյ աչուըներն որոնք բաւական ժամանակէ ի վեր անդադար կ'արաստուէին, եւ կարդալու համար պէտք չունեցաւ վառած մարխին մօտեցնել զայն, որովհետեւ քանի՛ բանար, գիրերն աւելի կը փայլէին փոսփորի



մը պէս. որմաւելի փայլ կ'առնէ գլորուելով :

« Սակայն չորս գիր միայն կար, այնքան շողշողուն, զորս կը համբէի սքանչացած, եւ Թերէզ կարդաց գրուած բառը :

« Յո՛յս :

« Եւ մի եւ նոյն ժամանակ, թուղթը, խուսափելով մատներէն ծխնելոյզէն վեր թռաւ՝ իբր ուրուականէն շնչուած, եւ ժամը չորս կը զարնէր եկեղեցւոյն զանգակն :

« Ժամացոյցին հնչիւնները, զորս փոթորիկը կը բերէր, աւանջներուս մէջ կը մտնէին մեռելական զանգակի հիշիւններուն պէս, եւ սակայն կ'սկսէի յուսալ, ինչպէս նաեւ Թերէզ, այս խորհրդաւոր դէպքին հանդէպ :

« Արդէն տեսնուած չե՞ն յաճախ Ծննդեան հրաշալի գիշերներ :

« — Մտիկ ըրէ՛, Թերէզ, փողոցին մէջ չե՞ն քալեր:

« Փոթորկին յաւիտենական հռչակներէն զատ ոչինչ, եւ յանկարծ փեղկի մը ճարձատրութիւնը լսուեցաւ որ, ծխնիններէն փրցուելով կը ջարջախուէր պատին դէմ. Սակայն, ինծի այնպէս եկաւ թէ՛ ոտնաձայն մը կը լսէի:

« Ճշմարիտը սա է որ Թերէզ ու ես ինքզինքնիս կորուսած էինք: Մտածեցէ՛ք անգամ մը, այն բոցեղէն գիրերը որոնք թըռած էին ծխնելոյզէն՝ եկած կեցած էին սանդաղներու մէջ:

« — Թերէ՛զ դուրսը ոտնաձայներ կան և թէ կը քալեն:

« Եւ ահա՛ յանկարծ դուռը բացուելով հայրս ու երկու եղբայրներս ներս կը մտնեն իրենց մօմազօծ տառասոկներուն մէջ փաթուած ու կ'ոկսին հոմբուրել մեզի կրկին ու կրկին:

« Կը տեսնէ՛ք, տղաքներս, Մաթուսաղայի տարիքն հասնելով՝ մարդս նորէն կը յիշէ այս բաները: Յուզմունքնիս ա՛յն աստիճան էր որ, եւ ո՛չ մէկերնիս խօսք մը կրցինք արտասանել եւ երիկ մարդիկ յորդառատ կ'արտասուէին, մինչդեռ իմ եւ Թերէզի աչքերը չոր էին: Նոյն իսկ կը մտածէի ինքնիրենս թէ՛ ստուերներ չէին անոնք. բայց ո՛չ, ստուերները չէին կրնար համբուրել:

« Ազատեցա՛ք, ըսաւ, ազատեցա՛ք. Ճշմարիտ հրաշք մ'է:

« — Անոր պէս բան մը, յարեց հայրս, եւ նշանաւոր հրաշք մը: Սա մինակ կրնամ ըսել որ՝ խեցեմորթի պէս գլորուելով ու քշուելով դեպ ի արեւելք անբացատրելի արագութեամբ, յանկարծ ձեռքի պէս բան մը զգացի որ կը ծանրանար իմինիս վրայ որով ղեկը կը բռնէի, եւ ամէնէն հետաքրքրականն այն է որ մենք դարձանք հովուն դէմ աննման թեթեւութեամբ: Բայց պէտք է գիտնաք որ այս տեսակ բաներն արտակարգ են նաւաստիներուն համար: Այն միջոցին, տղոցս դառնալով՝ « Ամէնն այս չէ, ըսի, պէտք է աղօթենք անոնց համար, որոնք տունը մնացած են: Բայց, փոթորկին մէջէն, հովի մռնչիւններ, ջրային լեռներ, զորս ուրականը կը թաւալէ, ամէն կողմ, մեր շուրջն, նշմարեցի թէ առանց ցնցումի եւ տատանման, մեր մակոյկն հակառակ կողմ կը սուրար՝ խորհրդաւոր զօրութենէ մը մղուած եւ տեսակ մը լուսեղէն ամպի մէջ լողալով: Անպատճառ, ըսի մտքէս, աղջիկներն աղօթած են մեզի համար, եւ բարի Ծնունդը նոնց խնդիրքը կը կատարէ: Ա՛հ, այո՛, բարի Ծնունդը՝ զոր նշմարեցի փայլակի մը լոյսին յառաջակողմը, ձեռքը հեծանին վրայ, սպիտակ պարեգօտ մը հագած եւ մազերն ուսերուն վրայ թափթփած, ճակատին շուրջը լուսեղէն պսակով զարդարուած, տղու կերպարանք մը՝ որ կը քալէր ջուրին վրայ: Արդ՝ ամէն մարդ գիտէ թէ՛ բարին Աստուած միայն կ'ընէ այսպիսի հրաշքներ, եւ պէտք է հաւատալ թէ ինքը քաշած բերած է մեր մակոյկը Սէն-Վասթի նաւահանդիստը: Իսկ թէ ի՛նչպէս ազատեցանք, բացի այս ըսածներէս, այն աւելի դժուարին է:

« Թերէզ ընդմիջեց, հայրիկն ու ըսաւ:

« — Մարթայի սանդաղները:

« Երեքը մէկէն ոտքի ելան եւ մօտեցան, անոր աշուրներուն մէջ նայելու համար, խենթ կարծելով զայն: Բայց Թերէզ ամէն

բան պատմեց անոնց, եւ անմիջապէս ընդունուեցաւ որք մակոյկն ազատողը նոյնն է, որ կէս գիշերին Պատարագի պահուն լուսեղէն թուղթը սահեցուցած էր իմ սանդալներուս մէջ:

« Յաջորդօրէն, փոթորիկն գրեթէ հանդարտած ըլլալով, եւ րեւակայեցէք աաշուծիւնն անոնց, որոնք տեսան մեր հինգեր-նուս անցնիլը գիւղին մէջէն եւ եկեղեցի մտնելն: Բոլոր ծեր նա-ւաստիներն զարմացած մնացած էին եւ ամէնուն կողմէ հարցում-ները կը տեղային:

« — Առանց մակոյկի՞ վերադարձաք:

« — Մակոյկը վարը Սէն-Վասթի նաւահանգիստին մէջն է ան-ազարտ, ուր մտանք հակառակ հովին:

« — Ծերունի Ռուէլ անպատճառ խենթեցած է, կը կրկնէին շատեր. ծովուն վրայ շատ անհեթեթ ու անհաւատալի բաներ տեսնուած են, բայց երբեք տեսնուած չէ հովին դէմ քալող մա-կոյկ մը:

« — Ի բաց առեալ, երբ բարին Աստուած քաշէ պարանը, ը-սաւ հայրս:

« Հաստատօձայնով արտասանուած այս խօսքերը լսող նաւազ-ները գլուխնին բացին, միայն սկեպտիկներն առին քալեցին, եւ ըսին թէ՛ վարպետ Ռուէլ՝ առանկ բաներու չէր հաւատար: Միշտ շարամիտներ կը գտնուէին որոնք բան մը չեն գիտեր և ուսերնին կը թոթուեն՝ երբ իրենց ըմբռնումէն վեր բան մը պատմուի:

« Իմ գիտցածս այս է որ հայրս մեռաւ անկողնոյն մէջ, տարի-ներով բռնաւորուած եւ խոր ծերութեան մէջ, առանց երբեք նաւարկելու Ծնունդի առջի օրը, նոյն իսկ ամէնէն գեղեցիկ օդ ըրած ատեն: Ինչպէս որ կ'ըսէի ձեզի, անկէց ի վեր վաթսուն և հինգ տարի է, եւ որովհետեւ ամէնէն պզտիկն էի, միսմինակ մնացի աշխարհի մէջ՝ յատկապէս պատմութիւններ պատմելու հա-մար ձեզի: Բայց ես անգին յիշատակ մը պահած եմ այդ անձ-կալից եւ յետոյ ուրախառիթ գիշերէն, եւ քանի որ խելօք կե-նալու խոստումնիդ բռնեցիք, հիմա պիտի ցուցնեմ ձեզի:

Այն առեւն մօրաքոյր Մարթա բացաւ իր գգրոցն, պղնձէ իր լայն ու հին գգրոցը, եւ խորանարդի ձեւով բան մը դուրս հա-նեց, ժամանակէն դեղնած կարմիր թաւիշի մէջ պլլուած, սեղա-նին վրայ դրաւ զայն եւ ծածկոցը վերցուց: Եւ ինչ տեսնանք. ապակեայ տուփի մը մէջ, մանկական երկու փոքր սանդալներ, փայտէ շինուած, առանց կապի եւ դեղնորակ, որուն պէս մինչեւ ցայսօր կը ծախուի չըջակայ վտճառանոցներու եւ տօնավաճառնե-րուն մէջ: Մօրաքոյր Մարթա մեր հիացումը տեսնելով՝ կուրա-խանար, եւ երբ վայրկեանն եկաւ սանդալները դարձեալ իրեն գլրոցին մէջ դնելու,

« — Կ'ըմբռնէք անշուշտ թէ, ըսաւ այն ժամանակէն ի վեր ո՛չ ոք ոտքը դրած է այս սանդալներուն մէջ »:

ՏԱՐԻ ՄԸ ՍԱՌՆԱԿՈՅՏԻՆ ՎՐԱՅ

Նանդէնի դիւցազնական արշաւանքէն յետոյ, կը կարծուէր թէ կարելի չպիտի ըլլայ, բաւական ժամանակ, ա'լ աւելի հեռուն յառաջանալ դէպի հիւսիսային բեւեռ: Ն. Ա. Բ. Ապրուծայի դուքսը. Վիքթօր Էմմանուէլի թոռը, բեւեռի թագուն ձգողական զօրութենէն քաշուելով յաջողած է քայլ մըն ալ յառաջանալ դէպի անձանթօր: Սառնակոյտի մը վրայ ձմերուժ, փոթորիկի դէմ պայքար, ցուրտի ու անօթութեան նտանջանքները մարդկային կենսականութեանը մինչեւ յետին աստիճանը կրել կարող եղած յոգնութիւն ու զրկում, ահա՛ ինչ որ կը պատկերացնէ այս արշաւանքը որու արժանացած պատիւը այժման սուղի նստած է: Գլխաւոր դերակատարներուն օրագրերէն քաղելով, հոս կը ներկայացնենք ամէնէն ցայտուն մասեր այս սոսկալի տրամին որ ամիսներով տեւած և մէկէ աւելի զոհեր տուած է:

Ամէն կողմէ յարձակումներ կրող ամրոցի մը պէս, բեւեռը պաշտպանող սառէ պատուարները, քանի մը տարիէ ի վեր ենթարկուած են կանոնաւոր, յարատեւ յարձակումներու յանդուգն երկրախոյզներու կողմէ, որոնց միակ նպատակն է իրենց նախորդէն ա'լ աւելի յառաջ երթալ տաժանելի ու փառք տուող ճամբուն վրայ: Հազիւ թէ արշաւախումը մըլէտ կը դառնայ, ահա՛ կ'իմացուի թէ ուրիշ մը կազմուելու վրայ է: Տառապանք, վտանգ, ճախողուած, և ո'չ մէկ բան կը պաղեցնէ այս եռանդը:

Հիմակուան դիւցազնը իտալացի իշխան մըն է, Ապրուծայի դուքսը որ յաջողած է ամենալաւ կազմակերպութիւն ունեցող արշաւախումը մը առաջնորդել բաղձացեալ նպատակակէտին այնքան մօտիկ: Շնորհիւ արտասովոր ճարտարութեան մը, հազիւ Սիիով սառնակոյտին վրայէն անցնելով յաջողեցաւ՝ Արջային Սառուցեալ Ովկիանոսի սահմանները մինչեւ բեւեռի 227 մղոն մօտ տանիլ. ասոր համար ստիպուեցաւ երեք տարի անցնել բեւեռային ծովերուն մէջ: Ապրուծայի դուքսը տարբեր ծրագիր մը կազմեց: Որոշեց Սբիճպէրկէ անդին Ֆրանսա-Ժողէֆ երկիրը հասնիլ, ձմրան ամիսները սառնակոյտին վրայ անցնել և յետոյ դէպի բեւեռ յառաջանալ բախիրներով:

Քանեկ նաւապետին, Քալալի բժիշկին ու իտալացի և նորվէկիացիներու ընտրեալ խումբի մը ընկերակցութեամբ 1899ի գարնան մեկնեցաւ Էթուալ Բօլիւր կիտորասանաւուն վրայ: Այս նաւը 40 մէթր երկայնութիւն ունէր, մեքենաները 60 ձիու զօրութիւն մը կուտային որ նաւուն սրնթացութիւնը 6 կամ 7 մղոնի կը հասցընէր: Բախիրները քաշել տալու համար 150 շուներու վոհմակ մը առնուած էր:

Վարսուն օր խաւարին մեջ.

Հազիւ արշաւախումը, օգոստոսի սկիզբները, հասած էր Բրէնս-Ռոտովֆ կղզիին շրջակայները երբ սկսաւ պայքարը անուղք բնութեան դէմ: Շոգենաւուն կողերը, քանի մը տեղերէ տեղի տուած էին սառերու ճնշումին. պէտք էր անմիջապէս մեկ-

նիլ անկէ. առագաստներով, կայմի կտորներով, սառին վրայ բնակարան մը շինեցին, որու մէջ ամբողջ շաբաթներ քսան մարդկային արարած պիտի ապաստանէին ցուրտին, հովին, փոթորիկին դէմ:

Սակայն հարկ է դուրս ելլել տնակէն. շարժումի պակասութիւնը մահառիթ է: Խնամով նշանակուած նշանակետերու միջեւ կը շրջագային անոնք, շրջագայութիւն մը որ խաւարին մէջ կ'ըլլայ առ խարխափ, գէրօէն վար 25 աստիճան ցուրտով մը:

Փարատելու համար այս տեւական գիշերին առթած թախիծը որ կը տկարացնէ, կը ջղագրգռէ, կ'անէացնէ իւրաքանչիւրին բարոյական ոյժը, Ապրուճայի դուքսը ընկերներուն հետ միասին՝ բալխիւրով կատարելիք արշաւանքին ուղեգիծը կը պատրաստէ, որպէսզի կարող ըլլան, առաջին օրը ճամբայ ելլել առանց ժամ մը ատեն կորսնցներու:

Բրէնս Բոտոլֆ կղզիին հիւսիսային կողմը Ֆլիկլի հրուանդանէն պիտի մեկնին: Արշաւախումբը պիտի բաղկանայ երեք մասերէ որոնց իւրաքանչիւրը պիտի ունենայ երկու քայաֆ տեսակ մը նաւակ, զոր Եսքիմացիները կը գործածեն այդ ծովերուն մէջ:

Աղետաբէր՝ ձեռնարկ մը. — Զանգակի կոչը. — Զարթնում սառնակոյտի վրայ:

Տրամադրէք փորձ մը, որ քիչ մնաց աղետաբեր ըլլար, խուզարկուներուն տուաւ մէկ օրինակը ապագային վտանգներուն:

Շուններուն բալխիւր քաշելու կարողութիւնը փորձելու համար Ապրուճայի դուքսը, խաւար գիշեր մը ձեռնարկեց կղզիին մէջ խուզարկութիւն մը կատարելու: Հազիւ ժամ մը եղաւ վրանէն հեռանալին երբ թանձր մշուշ մը բարձրացաւ, հովը կը փչէր սուկալի ուժգնութեամբ, ձիւնի պտուտքներ անհետացուցին բալխիւրին հետքերը: Ետառնալուատենէն է, բայց շունները կորսնցուցած էին ճամբուն յիշողութիւնը: Բալխիւրները անանկ շուտ կը յառաջանար ճամբուն վրայ որ ապահով կը տեսնուէր թէ զառիթափի մը վրայ կը դառնուին:

«Ո՞ւր էինք, կը գրէ Ապրուճայի դուքսը, Սառնարանի մը վրայ կը գտնուէինք: Ընկերներէս մէկուն Բէթրաքօի հետ առաջ անցայ. բայց հազիւ թէ քսան քայլ առած էի երբ նշմարեցի որ սառը ստեքերնու տակ կը ձեղքուէր: Զանացի պոռալով իմաց տալ միւս ընկերներնուս, սակայն անօգուտ տեղը: Շունները՝ Բէթրաքօի լապտերին յոյսը տեսնելով քառատրոփ յառաջ նետուեցան: Երկու բալխիւրներ եւ շունները, Քանեի ու Ես սառնակոյտին վրայէն ծոցին մէջ զլտորեցանք. 9—10 մէթր բարձրութենէ անկում մը. բարեբաղդաբար միւս բալխիւրները ժամանակին իմանալով կանգ առին:

(Շարունակելի)

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԷՐ
ԱՐՄԲԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳԻՉ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐՍԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Ամէնէն Ժողովրդական, Ամէնէն Զուարճալի

Ե Ի

ԱՄԷՆԷՆ ՇԱՏ ԾԱԽՈՒԱԾ ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՅԸ

ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

Ի՞նչ է Քօնէրը. — Ագահութիւն. — Պարտաւորեալ ինը տարի առաջ (Քանգաղ լռութիւնեան). — Հագարումէկ կերպեր ծամը գիտնալու. — Պատմութիւն մը. — Աշխարհիս վախճանը. — Թէ ինչո՞ւ ես չեմ յաջողիր (Քասիմ). — Հարց-Պատասխան (Յ. Հանեան). — Անխոհեմ հարցումներ, Կնոջ հարցումներ (Ա. Փանոսեան). — Տիկին Մաք Ուիլերմս եւ կայծակը. — Քսան եւ ... դարու հաշ մը. — Կրօնական պատմութիւնը. — Այծեամի սրբը. — Հարսի մը պատրանքը (Քասիմ). — Աշխարհիս վրայ միայն կենալու տեղ. — Նշանուոր միակեանքներ. — Մխիթարական բուրբ յոռեանս բարեկամիս (Քասիմ). — Երկրագործական Պատահիկներ. — Օգտակար գիտելիքներ. — Յուին դաշմունք. — Աշխարհիս նախնական վիճակները. — Աչքերու առողջութիւնը. — Ակամայ գիւղացի (Յ. Պարոնեան). — Ժամացոյց մը զոմեղ պարունը. — Տանակնիդ, պարունայ. — Հինգ առ հարիւր տակուս. — Նամակադրոշմի լեզուն. — Զուարճալի դատաստան. — Թօթօ. — Քորնիշոնի երազը. — Մեղրալուսնի համբարդութիւն : — Մայր ու աղայ. — ԱԿՆՑԻ ՍԱՐԱՅ ՄԸ. — Գիւղերու համար. — Դրամագլուխ եւ Աշխատութիւն. — Կեռասենին. — Քսան բարայով աշխարհիս ոսկին. — ԹԻԸՍԹՆԵՐԸ. — Ելախտաի մշակութիւնը. — Հարիւրաւոր Առածներ ու ԶՈՒԱՐՃԱԼԻՔՆԵՐ եայլն, եայլն:

Դիմն է Ծ Դանեկան. — Գաւառներ՝ քղբասարով Ե Դանեկան

Հանրագիտակի բոլոր Գործակալներու հով

Ուղղակի մենէ հինգ հաս զնոյներուն վեցերորդ մը նուէր կը տուի

